Արձանագրություն N 4

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-68 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան **« 05» «11» 2026թ. ժամը 15:00**

ՀՀ ՆԳՆ կարիքների համար համար խողովակային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-68** ծածկագրով գնահատման նիստը կասեցվել էր և «ՌԵՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ին առաջարկվել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից շտկված հայտը ներկայացվել է ժամանակին:

1. **Տվյալներ՝ շտկված հայտի ուսումնասիրման և գնահատման մասին.**

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-68** ծածկագրով գնման ընթացակարգի շտկված հայտը.

Մասնավորապես՝ «ՌԵՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում անհրաժեշտ էր հստակեցնել տեխնիկական բնութագրում ապրանքի՝ ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը, մակնիշը և ապրանքային նշանը, որը մասնակցի կողմից շտկվել է և գնահատվում է բավարար:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-68 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «ՌԵՎԱՆՇԻՆ» ՍՊԸ -ին:

Անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից: Օրենքով սահմանված ժամկետում ընտրված մասնակցին՝ «ՌԵՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ին կառաջարկվի կնքել պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Սաֆարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Հովհաննիսյան

Լ. Կարապետյան

Քարտուղար՝ Է. Մնացականյան